

**Նարեկ Հարությունյան, աշխ. գ. թ., դոցենտ**  
**ԵՊՀ**  
**Անի Հակոբյան, մագիստրանտ**  
**ԵՊՀ**

**ԼԱՆԴԵԱՖՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ**

**Հիմնաբառեր** – Լանդշաֆտաին ամանավորում. ամանշաֆտաին ծրագիր, լանդշաֆտային շրջանակային պլան, կայուն զարգացում:

Ըստ ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 17-ի նիստի՝ Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթների, «Լանդշաֆտ»-ը՝ մարդու կողմից ընկալվող տարածք է, որի բնույթը՝ բնական և/կամ մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք է: Ըստ նույն որոշման, լանդշաֆտային պլանավորումը սահմանվում է որպես լանդշաֆտի զարգացման, վերականգնման կամ կազմավորման հեռանկարները կանխորոշող հաստատուն գործուներություն: Լանդշաֆտային պլանավորումն ըստ էության՝ կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղիների տարածքային արտացոլումն է, դրանով իսկ հիմք հանդիսանալով կառավարման գործառնությունների իրականացման համար:

Ընդհանուր առմամբ, լանդշաֆտային պլանավորումը հիերարխիկ համակարգ է, որը Հայաստանի Հանրապետությունում պետք է իրականացնել հետևյալ փուլերով.

1. մշակել տարածքի զարգացման լանդշաֆտային պլան (մասշտաբը՝ 1000000-ից մինչև 500000),
2. կազմել լանդշաֆտային շրջանակային պլան (մասշտաբը՝ 200000-ից մինչև 100000)
3. Կազմել խոշորամասշտաբ լանդշաֆտային պլան (մասշտաբը՝ 1:25000 և ավելի խոշոր),
4. Մշակել նորմատիվային փաստաթղթեր լանդշաֆտային պլանների իրագործման և վերահսկողության համար:

Լանդշաֆտային ծրագիրն ամբողջական պլանային փաստաթուղթ է, որը ներառում է տարածաշրջանային մակարդակի քարտեզ և դրան կից բացատրական տեքստ, որը սահմանում է դիտարկվող տարածքում բնօգտագործման հիմնական ուղղությունները և դրանց համապատասխան՝ լանդշաֆտային հիմնական գործառնական գոննաները:

Շրջանակային լանդշաֆտային պլանը քարտեզների և տեքստերի ամբողջություն է, որը պարունակում է միջին մասշտաբի քարտեզներ, որոնք բնութագրում են տարածքի բնառեստուրային ներուժը: Շրջանակային պլանը ներառում է նաև տարածքի զարգացման նպատակները, բնության պահպանության և տարածքի օգտագործման պահանջները:

Խոշորամասշտաբ լանդշաֆտային պլանը քարտեզների և տեքստերի ամբողջություն է, որն ընդհանուր առմամբ նման է շրջանակային պլանին, բայց վերջինիցս տարբերվում է նրանով, որ բնության պահպանության և բնօգտագործման հարցերը քննարկվում են կոնկրետ տնտեսավարողների պահանջների և համայնքների մակարդակով:

Անցյալ դարի 70-ական թվականներից սկսած, տարածաշրջանային քաղաքականությունը և պլանավորումը ձեռք բերեցին պարզ արտահայտված էկոլոգիական բնույթ: Դրա հիմնական պատճառը հանդիսանում էր հասարակական պահանջը, որը մի կողմից էկոլոգիական էր, իսկ մյուս կողմից՝ ուղղված էր գլխավորապես հողօգտագործմանը: Քանի որ, ներկայումս կայուն զարգացման հայեցակարգը ձեռք է բերել միջազգային հնչեղություն, այս պարագայում, բնության և շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկվում է որպես տնտեսական զարգացմանը հավասար կարևորություն ունեցող նպատակ, հետևաբար, ազգային կարևոր որոշումներ կայացնելիս, Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է գլխավորապես առաջնորդվեն կայուն զարգացման սկզբունքներով: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանային պլանավորումն՝ իր բոլոր տեսակներով ևս, պետք է իրականացվի այնպես, որ առավելագույնս համապատասխանի կամ պարզապես չհակասի կայուն զարգացման ելակետային դրույթներին: Լանդշաֆտային պլանավորումը, դրա սկզբունքներն ու մեթոդները պետք է համաձայնեցնել տարածաշրջանային քաղաքականության և տարածքային պլանավորման բնապահպանական սկզբունքների հետ կամ էլ՝ դիտարկել դրանց համատեքստում: Պետության տարածաշրջանային քաղաքականությունը ենթադրում է երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման կառավարում՝ բացահայտելով երկրի առանձին մասերի առանձնահատկություններն ու զարգացման օրինաչափությունները: Այսպիսի կառավարման կարևոր գործիքներից մեկը հանդիսանում է տարածքային պլանավորումը: Լանդշաֆտային պլանավորումն ունենալով էկոլոգիական հիմնավորում՝ լավագույն միջոցն է շրջակա միջավայրի վրա մարդու աղեցության գնահատման համար: Լանդշաֆտային պլանավորումը կապված է տա-

րածքային պլանավորման, լանդշաֆտային ճարտարապետության և հողային կառավարման հետ: Եվրոպական երկրներում լանդշաֆտային պլանավորումն ընկալվում է որպես տարածաշրջանային քաղաքականությանն ուղեկից և հնարավորություն է տալիս մշակել ռեգիոնալ զարգացման քաղաքականություն, որը կնպաստի տարածքի հետագա կայուն զարգացմանը: Չնայած առկա ընդհանրությանը, այն է՝ եվրոպական երկրներում լանդշաֆտային պլանավորումն ընդհանուր առմամբ ունի էկոլոգիական ուղղվածություն, միևնույն ժամանակ, լանդշաֆտային պլանավորման համակարգը տարբեր երկրներում ունի առանձնահատուկ բնորոշ գծեր: Այլ կերպ ասած, լանդշաֆտային պլանավորման համակարգը պետք է համապատասխանի և գործնականում համապատասխանում է երկրի քաղաքական համակարգին, իրավական դաշտին և այդ երկրի բնապահպանական խնդիրներին:

Լանդշաֆտային պլանավորումը բարդ և բազմաշերտ համակարգ է, որին բնորոշ են հետևյալ հիմնական սկզբունքները.

- բախման կամ հակահոսանքի սկզբունք,
- նախազգուշացման սկզբունք,
- համապատասխանեցման սկզբունք:

*Բախման կամ հակահոսանքի սկզբունքի* համաձայն, առանձին, փոքր տարածքների համար կազմված պլանները պետք է որոշակիորեն համապատասխանեն ընդհանուր տարածքի համար կազմված պլաններին և՛ հակառակը: Այս սկզբունքը հանդես է գալիս ոչ միայն լանդշաֆտային, այլև պլանավորման մյուս տեսակներում: Ըստ էության, պլանավորման ավելի բարձր և ավելի ցածր մակարդակներում լանդշաֆտային պլանավորումը երբեմն զիջում է տարածաշրջանային պլանավորման մյուս ձևերին: Դա պայմանավորված է նրանով, որ լանդշաֆտային պլանավորման ամենաբարձր մակարդակն, ընդհանուր գծերով, իրենից ներկայացնում է կենտրոնական բնակեցված տարածքների և գլխավոր տրանսպորտային հանգույցների զարգացման ամփոփ սխեմա: Պլանավորման ավելի ցածր մակարդակն առավել մեծ չափով կապված է պետական մանրակրկիտ պլանների կամ հաճախ կանաչապատման ծրագրերի հետ: Սա, իհարկե, չի նշանակում, որ այդ մակարդակներում լանդշաֆտային մոտեցումը չի կարող կիրառվել: Լանդշաֆտային ծրագիրը, որը կարող է ընդգրկել ամբողջ երկրի տարածքը, որոշակիորեն կարող է ազդել բնակավայրերի համակարգերի և տրանսպորտային ցանցերի ուրվագծի վրա, ինչը նախօրոք հաշվարկվում է հեռանկարային զարգացման պլաններով: Բայց ստեղծված հեռանկարային պլանները ևս որոշակի սկզբունք-

ների հիման վրա են կազմվում, և ունենալով գիտական հիմնավորում, կարող են որոշակիորեն ազդել լանդշաֆտային պլանավորման հետագա աշխատանքների վրա: Այս տեսակի հարաբերությունները ստացել են «բախման կամ հակահոսանքի սկզբունք» անվանումը: Տարածաշրջանային կազմակերպման մակարդակում այս սկզբունքը ենթադրում է վերին և ստորին մակարդակի պլանավորման փոխազդեցություն:

*Նախազգուշացման սկզբունքի* միջոցով ցույց են տրվում բոլոր հնարավոր խախտումները, որոնք կարող են վտանգել տարածքի կայուն զարգացմանը: Այն իրականացվում է լանդշաֆտի տարրերի և բաղադրիչների բազմազանության և դրանց միջև գոյություն ունեցող ֆունկցիոնալ կապերի պահպանման միջոցով: Այլ կերպ ասած, նախազգուշացման սկզբունքի համաձայն պահպանվում է փոփոխվող և վերափոխված տարածքների միջև թույլատրելի հարաբերակցությունը: Այս սկզբունքն իրականացվում է կենսաբազմազանության ինքնավերականգնման և ջրային ռեսուրսների ինքնամաքման միջոցով՝ հիմքում ունենալով լանդշաֆտի ինքնակարգավորման կամ ինքնակազմակերպման ունակությունը:

*Համապատասխանեցման սկզբունքն*, ընդհանուր առմամբ, նախորդի օրգանական շարունակությունն է և սահմանում է տարածքի օգտագործման և պահպանման համապատասխանեցում: Ընդ որում, այս սկզբունքը բոլորովին էլ չի առանձնացնում օգտագործվող և պահպանվող տարածքները, այլ ենթադրում է ակտիվ օգտագործվող տարածքի պահպանում՝ հստակեցնելով լանդշաֆտային պլանավորման և կայուն զարգացման միջև եղած ուղղակի կապը: Լանդշաֆտային պլանավորման համապատասխանեցման սկզբունքը ենթադրում է.

- չօգտագործել ռեսուրսներն ավելի շատ, քան դրանք կարող են վերականգնվել,
- թափոններն ու արտանետումները չպետք է գերազանցեն տարածքի կլանման ներուժը,
- լանդշաֆտի փոփոխման արագությունը, որը կապված է մարդու գործունեության հետ, պետք է համապատասխանի բնական գործընթացների արագությանը: [6]

Ասվածից հետևում է, որ լանդշաֆտային պլանավորումն ինքնին կարող է հանդիսանալ տարածքի կայուն զարգացմանն ուղղված գործունեություն՝ միևնույն ժամանակ դառնալով դրա իրականացման գործիքներից մեկը:

Ուսումնասիրելով լանդշաֆտային պլանավորման համակարգը, դրա բոլոր մակարդակները, կարող ենք ասել, որ լանդշաֆտա-

յին ծրագիրը ցույց է տալիս տարածքի օգտագործման հիմնական ուղղությունները՝ ընդգրկելով խոշոր արեալներ կամ զոնաներ, որոնք ունեն հստակ առանձնացված սահմաններ: Ի հակառակ սրան, լանդշաֆտային խոշորամասշտաբ պլանը հստակ պատկերացում է տալիս տարածքում նպատակային հողօգտագործման տեսակների մասին: Շրջանակային լանդշաֆտային պլանը, ընդհանրացնում է խոշորամասշտաբ պլանի սահմանած դրույթները և, միևնույն ժամանակ, կոնկրետացնում է լանդշաֆտային ծրագրի սահմանումները:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ Հայաստանի Հանրապետության տարածշրջանային քաղաքականության ու կայուն զարգացման նպատակներից է բխում տարածական պլանավորման լանդշաֆտային գործիքի կիրառումը: Լանդշաֆտային պլանավորման գործիքի կիրառումը թույլ կտա Հայաստանի Հանրապետության ազգային ծրագրերի երկարաժամկետ հաշվարկներում ապահովել սոցիալ-տնտեսական համաչափ զարգացում և բնապահպանական անվտանգություն:

#### Գրականություն

1. ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 17-ի նիստի N 45 արձանագրային որոշման հավելված:
2. Антипов А.Н., Дроздов А.В., Кравченко В.В. и др. Методические рекомендации по ландшафтному планированию, М.: Гос. центр экологич. программ, 2001, 73 с.
3. Колбовский Е.Ю., Ландшафтное планирование, М. «Академия», 2008. 336 с.

## АННОТАЦИЯ

**Нарек Арутунян**, *к. геогр. н., доцент*  
ЕГУ

**Ани Акопян**, *магистрант*  
ЕГУ

### ЛАНДШАФТНОЕ ПЛАНИРОВАНИЕ КАК ИНСТРУМЕНТ РЕГИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ И СТАБИЛЬНОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

**Ключевые слова** – Ландшафтное планирование, ландшафтные планы, рамочный план ландшафта, устойчивое развитие

В работе ландшафтное планирование просматривалось как спутник региональной политики государства, которое нужно согласовать с экологическими принципами территориального планирования, или просматривать под этим контекстом. Были представлены уровни, связи между принципами и идеологии стабильного развития ландшафтного планирования. Исследован структуру ландшафтного планирования, его все уровни, с нашей стороны объектом планирования, было предложено выбрать административные области республики, в которых планирование нужно выполнять на уровне рамочного ландшафтного плана.

## ANNOTATION

**Narek Harutyunyan**, *PhD of Geography, Associate Professor*  
YSU

**Ani Hakobyan**, *Master Degree*  
YSU

### LANDSCAPE PLANNING AS A MEANS TOWARDS REGIONAL POLICY ENHANCEMENT AND SUSTAINABLE DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

**Keywords** – Landscape planning, landscape plans, landscape framework plan, sustainable development.

Landscape planning in this thesis work is considered to be a key pillar of the state's regional policy, which should meet the environmental principles of the territorial planning, or be a part of the context. As an integral part of the thesis work, landscape planning levels, correlation of principles and sustainable development have been defined.

A feasible research has been conducted on the landscape planning system, and all its levels, followed by our recommendation to select the country's administrative regions as a planning object, where a landscape framework plan should be designed and implemented.